ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-21/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 05.08.2021թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահող՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Ա. Գևորգյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Գ. Սահակյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Վ. Հակոբյանը
Է. Մնոյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ/ Մ. Նիկոլյանը
Բացակայում է՝ Ռ. Աֆանդյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով ս.թ. հուլիսի 23-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԽԾՁԲ-21/14 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, ս.թ. օգոստոսի 2-ին, ժամը 10.00-ին:

Հանձնաժողովը արձանագրեց.

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	գործունեության հասցեն էլ. փոստի հասցեն	հեռախոսա-համար	ՀՎՀՀ
1	ՊՐՈԷՔՍ ՓԲԸ	Բագրատունյաց 54/1 haykkhudaverdyan@gmail.com	041-47-41-31	02287411
2	Պրոֆ Ինջինիրինգ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցու 31/3 4-րդ հարկ p.engineering@gmail.ru	+374 77-26-77-66	00210671
3	ՕՆ ԴԻԶԱՅՆ ՍՊԸ	ՀՀ, ք. Մեծամոր, 2. 10/18 tender@ondesign.am	098 77-77-31	04429615

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

ՕՆ ԴԻԶԱՅՆ ՍՊ և ՊՐՈԷՔՍ ՓԲԸ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով /Հրավեր/ պահանջվող փաստաթղթերը /կցվում են/:

Ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա/ ՕՆ ԴԻԶԱՅՆ ՍՊԸ՝

- Հավելված 1՝ դիմում հայտարարությունում հեռախոսահամարը ճիշտ չէ լրացված;

- Հավելված 3-ով ներկայացված Տիգրան Մնոյան Նորիկի /ճարտարագետ-էլեկտրիկ/ փաստաթղթին կցվել է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից տրված Վկայագիր՝ բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտելու պաշտոնական փաստաթղթի /դիպլոմ/ ներկայացնելու փոխարեն:

- Պայմանագրի կատարողական փաստաթղթերին կցված չէ հաշիվ վավերագիրը:

բ/ ՊՐՈԷՔՍ ՓԲԸ ՝

- Հավելված 1՝ դիմում հայտարարությունում գործունեության հասցեն ոչ ամբողջական է;

- Նմանատիպ պայմանագիրը ներկայացված է առանց գումարի նշմամբ, ինչը թույլ չի տալիս Հրավերի 2.4.1 կետով սահմանված **«Մասնագիտական փորձառություն»** չափանիշի մասով գնահատել մասնակցի հայտը /պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում գնման առարկայի նախահաշվային արժեքի հիսուն տոկոսից/;

- Ներկայացված հայտում բացակայում են նաև պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը /հանձնման-ընդունման արձանագրություններ, հաշիվ վավերագրեր և այլն/:

գ/ Պրոֆ Ինջինիրինգ ՍՊԸ՝

- Ներկայացված փաստաթղթերում առկա չէ Հրավերով պահանջվող լիցենզիան / Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝ էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ Էներգատեխնիկական համակարգեր/;

- Հավելված 3-ին կցված չեն Հրավերով պահանջվող աշխատակցի տվյալները /համաձայնությունը, անձը հաստատող փաստաթուղթը, բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտելու պաշտոնական փաստաթուղթ /դիպլոմ//:

- Նմանատիպ պայմանագրին կցված չէ հաշիվ վավերագրերը:

Ի գիտություն

Մասնակցի կողմից ներկայացված հայտում ոչ գնային պայմանների բացակայությունը չի հանդիսանում հայտի մերժման հիմք, ոչ գնային պայմաններին տրված գնահատականը ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

4. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժնի դրամ ՀՀ

Հ/հ	Գնման առարկա	Նախահաշ-վային գու-մարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
			Անվանումները	Գնային առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	**Անտառամեջի հեռուստակայանը** սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգման նախագծերի պատրաս-տման և ծախսերի գնահատման խորհր-դատվական ծառայության ձեռքբերում	415 000	ՊՐՈԷՔՍ ՓԲԸ	1 045 000	209 000	1 254 000
			Պրոֆ Ինջինիրինգ ՍՊԸ	370 000	-	370 000
			ՕՆ ԴԻԶԱՅՆ ՍՊԸ	399 000	-	399 000
2	**Տանձավերի հեռուստակայանը** սնող 10 կՎ էլեկտրահաղորդման օդային գծի վերանորոգման նախագծերի պատրաս-տման	460 000	ՊՐՈԷՔՍ ՓԲԸ	205 000	41 000	246 000
			Պրոֆ Ինջինիրինգ ՍՊԸ	420 000	-	420 000

	և ծախսերի գնահատման խորհր-դատվական ծառայության ծեռքբերում					

ՊՐՈԷՔՍ ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը 1-ին չափաբաժնով գերազանցում է նախահաշվային գինը:

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և <u>ՕՆ ԴԻԶԱՅՆ ՍՊ, Պրոֆ Ինջինիրինգ ՍՊ, ՊՐՈԷՔՍ ՓԲ ընկերություններից</u> պահանջել Հրավերով նշված էլեկտրոնային փոստին ներկայացնել սույն արձանագրության 3-րդ կետով արձանագրված շտկման ենթակա փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ **06.08.2021 ժամը** 17.00-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահող՝ Ա. Գևորգյան

Գ. Սահակյան

անդամներ՝ Վ. Հակոբյան

Է. Մնոյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան